

հակամոյշ օրհորդաց ծխական դպրոցին մէջ՝ ծրի դաստիարակութիւնը անելոյ համար ինդիք մատուցին, ուստի եւ Վեհ. Հայրապետ սիրով ընդունելով նոցա առաջարկութիւն, հաստատուեց արաջարկեալ ծրագիրը:

ՍՈՒՐԷԱՆԴԱԿ ԵՒ ԻԶԱՆԳԵԱՆ *

Յարաբերութիւն:— Մեղուի եւ Փռեցի երկամեայ դատապարտութիւն:— Երեսի. ժողով:— Սեթեան եպիսկոպոսին ամսական:— Վանէն եւ զրպարտութիւնը եւ մատնութիւնը:— Զրիալարժ եւ թոշակաւոր աշակերտներ:— Մալաթիոյ մէջ:— Սենդեան Արին վերայ:— 10000 սոկի:— Ազգ. պարտոց հանգանակութեան հաշիւ:— Այլ առակ:— Սամաթիա:— Սամանաղուքեան վերաբերելի յանձնաժողով:

Անքաղաքագիտական հեռատեսութեամբ Պատրիարքը մեծ պակասութիւն ըրաւ Յունաց հետ բազում տարիներէ ի վեր շարունակուած տեսակցութեան մի յարաբերութիւն դադարեցնելով, որ Ծնունդին եւ Զատիկին կպատահէին:

Մեծ տօներուն այնպիսի տեսակցութեանց փոխադարձ երթեկեկութիւնները՝ որչափ եւ իցէ՝ քաղաքական նշանակութիւնէն զուրկ չէին եւ ոչ աւագուտ երեւմն մեր ազգին ալ:

Յիրաւի Յունաց եկեղեցականաց տգետ մասին կրօնամոլութիւնը եւ տեղ տեղ Քրիստոսի կամաց եւ հրամանաց բոլորովին ներհակ երեւմն կատարուած գեղձումները վիշտ կպատճառեն մեզ, սակայն նոյն իսկ ինքեանք յոյները երբ զգացած էին այն ատկի գործերնին եւ հետզհետեւ ուղղուելու ձգտումներ կցուցնէին, մեզ կվայելէր մեր Ս. կրօնի աղատամտութիւնը եւ վսեմութիւնը վահան ունենալ, եւ միշտ վեհանձնութեամբ ամէցնել զանոնք. ի հարկէ շուտով անոնք ալ նախապաշարեալ կրօնամոլութիւններէն պիտի հեռանան:

Ընշուշտ պատրիարքները երբ կմիանան, իրենց ժողովրդոց եւ նոյն իսկ իրենց համար շատ լաւ գործեր կարող են արդիւնաւորել: Բայց միմեանց

հակառակելով՝ աւելի վնասներ կքաղեն եւ պիտի քաղեն:

Երանի թէ կրկին շարունակուէին յարաբերութիւնները, եւ այն ժամանակ աւելի դիւրին է հետզհետէ յոյները ամաշկենել իրենց կրօնամոլ գործոց համար եւ յետո նահանջելու հարկադրել ազատամիտ սկզբունքներով:

*

Յունար 17 էն Մէլէս շարիփարի. հանդէսը եւ փետրվարի 7 էն Փռեց լրագիրը երկ—երկու ամիս միջոցով դատապարտուեցան:

Ս. Պատրիարքի նկատմամբ՝ առաջինը սիրահար. պատկեր մը տպած, եւ վերջինը Պարինէն գրուած մի տամակ՝ որ անցեալ եւ ներկայ անհաճոյ ընթացիցն վերայ կգանգատէր, հրատարակած էր:

**

Գոհ եմք որ Երեսի. Ընդհանուր Ժողով օրինաւոր ընթացքով կյարատեւէ, եւ բաւականին յաջող է:

Ըստ այժմ վտանգներու երկխաղները փարօտեցան:

**

Ազգ. Վարչութիւն տեղւոյս զմեզով Գեր. Սեթեան Յօհ. Եպիսկոպոսի զառամեալ վիճակին վերայ, որ չէ կարող մի պաշտօն վարել, որոշեց ամսական երկու ոսկի (լիրա) կեդրոնական սրնտուկէն տալու, եւ սկսաւ տալ:

Սոյնպէս ազգային մը ամսական երկու ոսկի, եւ Ս. Պատրիարքն ալ մէն մի ոսկի պիտի տան, ինչպէս հրատարակած է Փռեց:

**

Վանէն բազմաթիւ երեւելի ազգայնոց ստորագրութիւններով բողոքագիր մի խրկուած է Պատրիարքարանին՝ իմանալով որ յանիրաւի զրպարտութեամբ եւ մատնութեամբ Պօղոս վարդապետ աքսորուած է, մինչդեռ նորա որ աստիճան Օսմ. կայսեր. կառավարութեան հաւատարիմ ըլլալը երեւելի փաստերով ալ կը հաստատեն:

Ըյս գործը ծանր կերպարանք պիտի առնէ: Արծիս մենք մեր ձեռքերով մեր տունը կը հարուածենք եւ կը կործանենք: Ի՞նչ անեմ այն

(*) Անցեալ փետրվարի ամսագրոյ թերթից անհետացան զմեզ հարկադրեց մեր Պօղոս թղթակցին երկու գրութիւնը միացնել ներկայիս մէջ:

գլուխ հոգևորականին որուն կրկն
գոհ կերթան, Աստուծոյ Պօղոս՝ Եղիշիոյ Յակոբ՝
Սերապիոյ Վարապետ և այլն և այլն եպիսկոպոս
և փարպապետներ:

Իբր լմէ Պատրիարքարան միամիտ է՝ բան չդի-
տեր, և ահա անակնկալ հրամաններ կուգան Բ.
դոնէն, և խեղճ մարդը ամենայն պատկառանք և
խոնարհութեամբ կարտաւորուի կատարելու . . .

Դու միայն կաս յերուսաղէմ:

Ըստ առաջարկութեան Աւսօրէից Խորհրդոյ
Խառն ժողովն տնօրինեց Արմաշու վանուց վար-
ժարանին մէջ տասն աշակերտ ձրի ընդունել հե-
տեան տեղերէն և դաստիարակել, որպէս զի իրենց
թիւնը մէջ ի ժամանակին օգտաւէտ ըլլան:

- | | | |
|----------------|---|------|
| 1. Սոյ վիճակէն | 3 | հատ. |
| 2. Սղերդէն | 2 | " |
| 3. Դերձանէն | 1 | " |
| 4. Արճիշէն | 1 | " |
| 5. Խարբերդէն | 2 | " |
| 6. Քղիէն | 1 | " |

Նաև Ս Երուսաղէմի և Արմաշու մէջ հաս-
տատեալ վարժարանաց թիշակաւոր աշակերտներ
տալ որոշուեցաւ հետեան վանքերէն:

1. Աղթամար.
2. Սերապիոյ Ս. Նշան.
3. Սեպիւրի Ս. Վարապետ.
4. Մարգուանու Ս. Աստուածածին.
5. Եղիշիոյ Ս. Յովհան.
6. Վարնոյ վանքերէն մին.
7. Գաղատիոյ Ս. Աստուածածին.
8. Արշնու Բարձրահայեաց վանք:

Արի ձրիաւարժները Գաւառական Վարչու-
թիւնը պիտի ընտրին ամենէն յաջողակ և ընդու-
նակ պատանիներն:

Աւերջինները վանքերն իրենք պիտի ընտրեն, և
իրենց վանուց սնտուկէն օժանդակեն, և յիշեալ
երկու վանքերէն որն որ յարմար տեսնեն՝ այն
տեղ պիտի խրկեն:

Աւերջիններս պարտաւորուած են նաև իւրեանց
կարողութեան համաձայն մէն մի վանական դպրոց
ալ բանալու, ինչպէս արդէն զրա՞ծ եմ:

Մալաթիոյ մէջ յուղմունք կատարեանայ մե-
րազնէից մէջ

Առաջնորդական խնդիրն է պատճառ, և Առա-
քիւ վարդապետը կտրին և կուզեն հակառակ
Սրապիոն Եպիսկոպոսի:

Վարչութիւն կաղ ի կաղ կերևի այս խնդրոյս
մէջ և Առաքիւի վերայ վստահ է:

Ս. Ծննդեան այրին վերայ Լատինք կրկին բռ-
նաբարութիւն ի գործ դրին, միայն իրենց սեպհա-
կանացնելու համար, ըստ իւրեանց քմաց և անոր-
ժակաց՝ իւրեանց յատուկ պատկերներով Բ. գրան
ապսպարած վարագոյրը շինել և կախել տալով,
սակայն Հայոց և Յունաց Պատրիարքներուն բո-
ղոքին վերայ՝ Բ. Դուռը վերցնել տուաւ, և ու-
րիշը ապսպարեց, այնպէս որ երեք ազգաց համար
ալ հաճելի ըլլայ և իւրաքանչիւրոց իրաւանց
համաձայն:

Ահաւասիկ ինչ նշանակութիւն և արդիւնք ու-
նեցաւ Յունաց և Հայոց Պատրիարքացն Երուսա-
ղէմի միաբան գործողութիւն և աջակից ջանք:

Այս տեղ մեծ ջանք կայ և Վարչութեան ալ
առաջարկուած է ծրագիրն՝ այս ինքն որոշ հաշ-
Օսմանեան ոսկւոյ (լիրա) վիճակահանութիւն
բանալ, կէսը յատկացնել զանազան շահօղնե-
րուն, և կէսը հատուցանել ազգային պարտուց:
Թրքիւն ալ կառաջարկէ որ՝ Աստուծական խոր-
հրդոյ առաջարկած Վարժապետանոցի ծրագիրն
ալ ուշադրութեան առնելով, երկու ծրագիրը
միացնել և 5000 ոսկին վարժապետանոցի հաս-
տատութեան յասկացնել, որուն ազգը անհրա-
ժեշտ և չափազանց մեծ կարօտութիւն ունի, և
որ ապագային մէջ վսեմ բարերարութեան վսեմ
արգասիքը պիտի ընծայէ Ազգիս:

Ես ալ Թրքիւն համաձայն եմ:

Ազգային պարտքը (որ որոշ հաշ- Օսմանեան ոսկւոյ (լիրա) վիճակահանութիւն հատուցա-
նելու համար Ս. Պատրիարքին յանձնուած էր, և
շնորհակալ եմք նորին Սրբազնութենէն, որ տուած
հաշուէն կիմացուի՝ որ էրեք հաշ- Օսմանեան ոսկւոյ (լիրա) վիճակահանութիւն հատուցա-
նելու համար Ս. Պատրիարքին յանձնուած էր, և
շնորհակալ եմք նորին Սրբազնութենէն, որ տուած
հաշուէն կիմացուի՝ որ էրեք հաշ-

կանի չափ պարտք հատուցուած և վճարուած է եղեր:

Սակայն զանազան նուիրատուներէն լսուած տրտուելներէն կ'իմացուի որ՝ 600 լիրայէն՝ այս ինքն վաճառուն հազար դահլիսկանէն աւելի պակաս հաշիւ տրուած է, և Ս. պատրիարքին հրատարակած և յանձն առած խոստման վերայ լծէ՝ իմ մօտ կայ թերհաշիւ և գուցէ այնքան գումարէն աւելի ստակ որ ի ժամանակին պիտի տամ՝ և այլն, առայժմ՝ լռած են:

Այլ առակ լուարձք:

Սոց ապստամբին և ուխտազանցին համար պատահած և կատարուած զեղծմունքները բաւական չեղան, որ այժմ ալ երբ կ'առաջարկէ Պատրիարքարանի վարչութեանը, որ իւր խախուտ Աթոռը ուրիշ տեղ փոխադրէ՝ օրոյն վատութիւնը պատճառ բռնելով:

Ի՞նչ լծէ առաջ չէր գիտէր Սոց օգը, ոչ ապաքէն բնիկ Գարաշեցի է ինքը, որ Սսին մօտ է, ուրեմն լաւ գիտէր ինչու հապա յանձնառու եղաւ և այսքան խռովութեանց և տարածայնութեանց առիթ եղաւ:

Արդէն խիստ ուշացած է թող զինքն կառավարէ, յետոյ աթոռոյ վերայ խորհիւ թողումք որ բողոքովն Ասը դատարկացնել, միաբանութիւնը ցրուելու վտանգ կատարեալ բուռց աւերակ դարձնելու և ժողովուրդն խիստ շատ տեղեր յուսահատելու է ինչպէս այն կողմէն գրուածները կարգացնելով, կարելի է դուք ալ Մանգուէի մէջ հրատարակուած մի նամակ կարդացած կըլլաք, որ դառնապէս կ'զանգատէր:

Աղորմելի Սամուէլ օրհայի մէ՛ծ գործ տեսած եղան. երեսնին ճերմակ. — Կարելի է այսուհետեւ առիթ կունենամ այս մասին այլ ևս գրելու:

Սամաթիա՝ վերջին անգամ՝ Օքտօբէր և Մանգուէի մէջ պատահած գրակոխ ճակատամարտէն յետոյ յաջորդած հաշտութենէն ի վեր՝ ցաւալի տեսարան կ'ներկայացնէ Թաղ. խորհուրդ չկայ. ժողովուրդն երկպառակութեանց մասնուած է. զրոյն և ներքէն զրգոզներն անպակաս են, ազ-

գոյուտ հաստատութիւնները՝ մանաւանդ երկսեռ ուսումնարանները զրեթէ բարձի թողի եղած, և կեղեցին այրեացաւ որ վիճակին մէջ սգազգեաց կուլայ:

Վարչութիւնն շատ կաշխատի խաղաղութիւնն վերահաստատելու:

Տացէ՛ Տէր՝ ո՛ր շուտով յաջողի:

Վերջապէս Սահմանադրութեան վերաբնութեան համար մի Մասնաժողով կազմուեցաւ, որոյ անդամք հետեւեալներն են.

- Գեր. Նիկողայոս Եպիսկոպոս Աղասեան
 - Արժ. Մատթէոս վարդապետ Իզմիրլեան
 - „ Ղևոնդ „ Փիրղալէմեան
 - Բարեկ. Յովհաննէս քհնյ.
 - Մեծ. Յարութիւն Պէյ Տատեան
 - „ Կարապետ Էֆ. Գարակէօզեան
 - „ Օգոէնտ „ Խօճասարեան
 - „ Թադէոս „ Պեկեան
 - „ Մատթէոս „ Այվատեան
 - „ Գրիստոստուր „ Ղազարոսեան
 - „ Տելեմաք „ Էքսէրճեան
 - „ Բարսեղ „ Տիւրքերեան
- Մեծ. Լալէ:

Խ. Ե. ՀԱՅԿ. . . .

1875 Փետր. 10, Լ Թ. Բ. 5.

Է Կ. Պոլս.:

ԿԱՐԻՈՐ

Քննութիւն Սղնախի. . . յօդուածի նախընթաց մասնում (Արարտ փետրվարի) մտել էին երկու վերկալ.

սխալ ուղիղ
Հետեւող, յետոյ (եր. 79, էջ առաջին, տող 4—րդ)
դարաւանդութիւն, դիւցաւանդութիւն (« « 7—րդ)

չաւ երկկայ թուոյս երորդ երեսում (85-րդ երես) երկրորդ էջին ներքեւ առաջին ծանօթութեան մէջ պետք է

Պարսիք	Կորդով	Պարսիք
զոյս	«	զոյս
գիտ	«	գետ
կէլէի	«	կոլէի
Շահաւանդ	«	Շահաւանդ
ապի	«	ապի
Կիւրակոսի	«	Կիւրակոսի: